Հաստատված է

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

գիտական խորհրդի «24» նոյեմբերի 2017 թ. թիվ 118 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԷԹԻԿԱՅԻ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Երևան 2017 թ.

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների էթիկայի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է բարոյաէթիկական սկզբունքները, կանոնները, նորմերը, վարքագծի (վարվեցողության) կանոնները և գործարար հարաբերությունները ԳԿՄԿ-ում:

1.2 Կանոնկարգը ներդրվում է ԳԿՄԿ-ում գործունեություն իրականացնող աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների բարոյահոգեբանական, գիտամանկավարժական, դաստիարակչական և կազմակերպական հիմունքների զարգացման և ամրապնդման նպատակով, որը նպաստում է ԳԿՄԿ ընդհանուր գործունեության և զարգացման հիմնական ծրագրերի աջակցությանն ու իրականացմանը՝ ուղղված դասավանդողների մասնագիտական որակավորման բարձրացմանը և ներպետական կրթական համակարգում մրցունակության ապահովմանը:

1.3 ԳԿՄԿ աշխատակիցները, դասախոսական կազմը և ուսանողները կամավորության սկզբունքով ընդունում են պարտավորություն՝ հետևելու սույն Կանոնակարգով հաստատված վարքագծի և գործարար շփման կանոնները, նորմերը, սկզբունքները և պարտավորությունները:

1.4 Սույն Կանոնակարգի հիմքն են կազմում Բարձրագույն կրթության (ԲԿ) ոլորտի էթիկայի վարքագծքի մասին կանոնների միջազգային կարևոր փաստաթղթերը՝ *Բարձրագույն կրթության ոլորտում ինստիտուցիոնալ էթիկայի կանոնագրքի ուղեցույցի*, ՀՄԱ-ՄԿԴ, 2012 թ.), ՅՈՒՆԵՍԿՕ -ի՝ 1997 թ. *Բարձրագույն կրթության ուսումնական կազմի կարգավիճակի վերաբերյալ առաջարկության*, 2004 թ. ՅՈՒՆԵՍԿՕ -ի

Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության էթիկական արժեքների և սկզբունքների բուխարեստյան հռչակագրի, 2005 թ. Եվրոպական հանձնաժողովի *Հետազոտողների եվրոպական խարտիայի և հետազոտողների հավաքագրման վարքագծի կանոնագրքի դրույթները*:

1.5 Սույն էթիկայի կանոնակարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատակիցների՝ ակադեմիական աշխատակազմի, ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի էթիկայի կանոնները՝ բարոյաէթիկական սկզբունքների, վարքագծի կանոնների և գործարար հարաբերությունների հիման վրա:

1.6 ԳԿՄԿ ակադեմիական համակարգի սույն էթիկայի կանոնագրքի հիմնական նպատակն է ակադեմիական աշխատակազմի, դասախոսների և ուսանողների շրջանում, որպես բուհական ակադեմիական համայնքի ներսում, ձևավորել միասնական և համընդհանուր կանոններ, որոնք կվերաբերեն հիմնական դերակատարներին[1]:

2. Սույն կանոնագրքում ներառված դերակատարները

2.1 ԳԿՄԿ ակադեմիական համակարգի կառավարման աշխատակազմը

ա) ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող բարձրաստիճան աշխատակիցներ,

բ) մասնագիտական ծառայություններ իրականացնող ղեկավարներ,

գ) մասնագիտական ծառայություններ իրականացնող ավագ աշխատակիցներ (համակարգողներ),

դ) տեխնիկական անձնակազմից[2]:

2.1.1 Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող բարձրաստիճան

[1] Տես՝ Եվրոպայի Խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար ծրագիրը», էջ 2. կ.3:

[2] Տես՝ Սույն վարքագծի կանոնակարգում չեն սահմանվում ԳԿՄԿ տեխնիկական աշխատակազմի վարքագծի կանոնները: Ակադեմիական աշխատակազմի այս դերակատարները ներառված չեն ուսումնական գործընթացի կազմակերպման և կարգավորման գործընթացին:

աշխատակիցներ

- ԳԿՄԿ տնօրեն, փոխտնօրեն, դեկան, ուս.մասի պետ, կրթության որակի ապահովման բաժնի պետ, ասպիրանտուրայի բաժնի պետ, արտաքին կապերի բաժնի պետ, գիտքարտուղար, տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բաժնի պետ, իրավախորհրդատու:

2.1.2 Մասնագիտական ծառայություններ իրականացնող բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք և աշխատակիցները

- Հաշվապահական հաշվառման բաժնի պետ**,** անձնակազմի կառավարման բաժնի պետ, շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի պետ, մասնագիտական ամբիոնների վարիչներ, մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ, գիտական խմբերի ղեկավարներ:

2.1.3 ***Մասնագիտական ծառայություններ իրականացնող ավագ աշխատակիցներ*** (համակարգողներ)**.**

- Մասնագիտական ամբիոնների աշխատակիցներ (այդ թվում՝ տեսուչներ և մեթոդիստներ), տնտեսական բաժնի պատասխանատու, արխիվարիուս, գանձապահ:

2.1.4 ԳԿՄԿ ակադեմիական համակարգի տեխնիկական անձնակազմի աշխատակիցներ

- Վարորդներ, հավաքարարներ, բանվորներ, օժանդակ աշխատակիցներ:

2.1.5 Սույն կանոնակարգում առանձին դերակատարների խումբ են կազմում

- ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանողները, ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը:
- ՀՀ ԳԱԱ ասպիրանտները, հայցորդները:
- ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական աշխատակազմը:

ԳԼՈՒԽ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2.1 Սույն Կանոնագրքում ներառված են ԳԿՄԿ մագիստրատուրայի ակադեմիական աշխատակազմի աշխատակիցների և ուսանողների վարքագծի կանոնները և էթիկայի ընդհանուր սկզբունքները և արժեքները:

2.2 Վարքագծի կանոնները ձևավորվել են ԳԿՄԿ ակադեմիական աշխատակզմի կողմից, որի նպատակն է երաշխավորել ԳԿՄԿ աշխատակիցների մասնագիտական գործունեության պատշաճ և որակյալ կազմակերպումը՝ համապատասխան վարքագիծ դրսևորելու միջոցով:

2.3 ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի աշխատակիցների վարքագծի կանոնները ներառում են.

- վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը;
- աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը;
- գիտական հետազոտությունները;
- քննություններն ու գնահատականները:

2.4 ԳԿՄԿ ուսանողների վարքագծի կանոնները ներառում են.

- վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը;
- ակադեմիական բարեվարքությունը:

2.5 **Ընդհանուր սկզբունքները** ձևավորվել են ՀՀ օրենսդրության պահանջների, *Բարձրագույն կրթության ոլորտում ինստիտուցիոնալ էթիկայի կանոնագրքի ուղեցույցի,* Եվրոպական հանձնաժողովի *Հետազոտողների եվրոպական խարտիայի և հետազոտողների հավաքագրման վարքագծի կանոնագրքի դրույթների հիման վրա:*

3 ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

3.1 ***<u>Ակադեմիական բարեվարքություն</u>***

3.1.1 ԳԿՄԿ <u>ակադեմիական համակարգի աշխատակազմը՝ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք</u> իրենց վարքագծում պետք է դրսևորեն *բարեվարքություն*, որն արտահայտվում է հիմնական արժեքների վրա հիմնված էթիկայի (վարքագծի կանոնների) մի շարք դրական սկզբունքների և չափորոշիչների միջոցով:

Բարեվարքությունը «ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու և այն տարածելու» ակադեմիական համակարգի բարձր առաքելություն է, կապող օղակ էթիկայի սկզբունքների ու կրթության որակի միջև և միևնույն ժամանակ արգելք՝ կոռուպցիայի դրսևորումների կանխարգելման նպատակով:

3.1.2 **ԳԿՄԿ ակադեմիական համակարգի կառավարման աշխատակազմը**

Բարձրաստիճան ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող ակադեմիական աշխատակազմը փոխադարձ հարաբերություններում առաջնորդվում են ակադեմիական *բարեվարքության* սկզբունքով: Այն իրենից ներկայացնում է «<u>ակադեմիական բարեվարքություն</u>» դրսևորելու հատուկ պարտավորություն՝ աշխատանքի բոլոր դրսևորումներում և աշխատակիցների հետ հարաբերություններում, այդ թվում՝ առավել ցածր պաշտոն զբաղեցնող աշխատակիցների, գործընկերների, ուսանողների հետ փոխհարաբերություններում:

3.1.3 **Մասնագիտական ծառայություններ իրականացնող ղեկավար աշխատակիցները** պետք է դրսևորեն ակադեմիական ***բարեվարքություն*** գործընկերների, ուսանողների հետ փոխհարաբերություններում:

Միևնույն ժամանակ բարձրաստիճան ղեկավար կամ կառավարման գործունեություն իրականացնող անձանց սեփական վարքագիծը պետք է դիտարկվի ***«<u>Ակադեմիական բարեվարքության</u>»*** սկզբունքի համատեքստում, այն է՝ բարեվարքության սկզբունքի առանձնահատուկ կիրառելիությունը բարձրագույն կրթության ոլորտը խթանելու նպատակով:

3.1.4 **ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանողների, ակադեմիական համակարգի ասպիրանտների և հայցորդների** համար ***բարեվարքությունը*** պետք է դրսևորվի որպես *«ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու...»* պարտավորություն, որն

առնչվում է «Ակադեմիական բարեվարքություն» հասկացության հետ:

ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանողները, ակադեմիական համակարգի ասպիրանտները և հայցորդները համակուրսեցիների հետ փոխհարաբերություններում պետք է դրսևորեն նշված առաքելությանը համահունչ վարքագիծ:

4. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ և ՀԱՐԳԱՆՔ ԱՅԼՈՑ ՆԿԱՏՄԱՄԲ

4.1 Ակադեմիական աշխատակազմի աշխատակիցների հարաբերությունները պետք է հիմնված լինեն միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի և վստահության վրա: ԳԿՄԿ աշխատակիցների համար հարգանքի ու վստահության սկզբունքը դիտարկվում է որպես այլոց նկատմամբ հարգանքի դրսևորում, ինչը նշանակում է՝ հարգել մարդկանց արժանապատվությունը, իրավունքները, ֆիզիկական ու մտավոր ամբողջականությունը:

Հարգանքի և վստահության սկզբունքի պահպանումը ԳԿՄԿ յուրաքանչյուր աշխատակցին հնարավորություն է տալիս ակադեմիական համակարգի ներսում, իր գործընկերների և ուսանողների հետ հարաբերություններում դրսևորել համապատասխան վարքագիծ, որն անչափ կարևոր է աշխատանքային գործունեության մեջ համագործակցությունն ու կոլեգիալությունն ապահովելու համար:

Հարգանքի և վստահության սկզբունքը նպաստում է նաև ԳԿՄԿ ակադեմիական համակարգի աշխատակազմի աշխատակիցների հիմնական իրավունքների ճանաչմանը, որոնցով պաշտպանվում է աշխատակիցների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և պաշտպանությունը ֆիզիկական բռնությունից և վիրավորանքներից:

4.2 Բարձրաստիճան ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող ակադեմիական աշխատակազմի, մասնագիտական ծառայություններ իրականացնող բարձրաստիճան և ավագ աշխատակիցների համար հարգանքի և վստահության սկզբունքը դրսևորվում է հետևյալ կերպ.

- լիարժեք հարգանք են ցուցաբերում գործընկերների հետ գործնական հարաբերություններում:

- լիարժեք հարգանք են ցուցաբերում ուսանողների դասավանդման և ուսուցման փոխհարաբերություններում,
- լիակատար հարգանք են դրսևորում այլոց նկատմամբ և իրենց պարտավորություններն իրականացնելիս պահպանում են կոլեգիալության սկզբունքը:
- բարձրաստիճան ղեկավար և կառավարման պատասխանատվություն ունեցող ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց իրավասություններն իրականացնելիս պետք է լիովին պահպանեն ***ակադեմիական ազատության*** սկզբունքը:

Այսպես, օրինակ՝ կոնկրետ հետազոտական աշխատանքով զբաղվողների (ԳԿՄԿ մագիստրանտներ, ակադեմիական համակարգի ասպիրանտներ և հետազոտողներ) ***այլոց նկատմամբ հարգանքի*** *սկզբունքը նշանակում է պահանջ, որ որպես հետազոտական աշխատանք կատարողի գործատու կամ ֆինանսավորող, կամ նրանց անունից հանդես եկող անձ, բարձրաստիճան ակադեմիական աշխատակազմը հետազոտական աշխատակիցներին աշխատանքի ընդունելիս, նրանց աշխատանքի գնահատման և փորձաքննության ընթացքում ցուցաբերի թափանցիկ, անխտրական վերաբերմունք:*

ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմը երաշխավորում և ապահովում է *վստահության* սկզբունքը, որի վրա հիմնված են գործընկերների և ուսանողների միջև և գիտահետազոտական ազգային ու միջազգային ակադեմիական համայնքի փոխհարաբերությունները:

4.3 **ԳԿՄԿ ուսանողները** պետք է լիարժեք հարգանք ցուցաբերեն այլ ուսանողների և աշխատակազմի հետ իրենց հարաբերություններում (ակադեմիական և ոչ ակադեմիական):

Ուսանողների կողմից այլ ուսանողների հանդեպ հարգանքի դրսևորումն արտահայտվում է ուսուցման և դասավանդման գործընթացում՝ միմյանց նկատմամբ յուրաքանչյուրի արժանապատվությունը հարգելու, իրավունքները չոտնահարելու, մասնավոր կյանքին չմիջամտելու գիտակցության ընկալմամբ:

ԳԿՄԿ ուսանողները պետք է կարողանան վստահել ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմին՝ փոխադարձ հարաբերություններում, իսկ նրանց վարքագիծը պետք է լինի այնպիսին, որ ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմը և մյուս ուսանողները կարողանան վստահել իրենց:

5. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1 Փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքի ապահովման հիմքում ընկած է **հաշվետվողականության սկզբունքը:**

Հաշվետվողականության սկզբունքի համաձայն՝ Բարձրաստիճան ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող ակադեմիական աշխատակազմը պատասխանատու է իրենց լիազորությունների պատշաճ իրականացման համար[3]:

5.2 Հաշվետվողականության սկզբունքը ներառում է

- Կրթական գործունեության հաշվետվողականություն
- Գիտական գործունեության հաշվետվողականություն
- Ֆինանսական հաշվետվողականություն

5.3 Համաձայն հաշվետվողականության սկզբունքի՝ *ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող ակադեմիական աշխատակազմը հաշվետու* է.

ա) ինստիտուցիոնալ կառավարման մարմիններին, այդ թվում՝ Կրթության և գիտության նախարարությանը, Գիտության պետական կոմիտեին, Կրթության որակի ապահովման կենտրոնին՝ ԳԿՄԿ կրթության որակի ապահոման մասով:

[3] Տես՝ Թրանսպարենսի ինթերնեշնլ, 2009 թ., էջ 2:

բ) ուսանողներին, ուսանողական խորհուրդներին պատշաճ և որակյալ կրթություն ապահովելու, դասընթացների ժամանակ նախնական և շարունակական մասնագիտական կրթության տրամադրելու մասով:

5.4 Մասնագիտական ծառայությունների գծով ավագ աշխատակիցները հաշվետու են՝

- մասնագիտական ամբիոններին՝ դասընթացների կազմակերպման և մասնագիտական կրթության բնականոն գործընթացն ապահովելու մասով;
- ուսանողներին և ուսանողական խորհուրդներին՝ նրանց կողմից բարձրացված խնդիրների, մասնավորապես՝ ուսումնական գործընթացի, նրանց վերաբերյալ կայացված որոշումների և ուսումնական գործընթացին առնչվող այլ հարցերին պարզաբանումներ և խորհրդատվություն տրամադրելու մասով:

5.5 Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք հաշվետու են ԳԿՄԿ ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող ակադեմիական ղեկավարների, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառավարման մարմինների առջև: (Օրինակ՝ *հաշվետու* են պետական կառավարման մարմիններին ԳԿՄԿ-ում պետական գումարների օգտագործման հարցում):

5.6 ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող ակադեմիական աշխատակազմը պետք է իր իսկ կողմից սահմանված որևէ եղանակով հաշվետու լինի ԳԿՄԿ ակադեմիական ամբողջ անձնակազմի առջև:

5.7 **ԳԿՄԿ ուսանողները** հաշվետվողականություն ունեն ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի նկատմամբ՝ ԳԿՄԿ ներքին կագապահական կանոնների համաձայն համապատասխան վարքագիծ և իրենց ուսումնական առաջադիմության դրսևորելու առումով:

6. ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Ազնվությունը և բարոյականությունն էթիկական վարվեցողության հիմնական սկզբունքներն են, որոնցով ի սպառ բացառվում և արգելվում է այնպիսի գործողություն

կամ գործողությունների կատարում, որը կարող է որակվել որպես խարդախություն, ստախոսություն, խաբեություն, գողություն, շորթում և այլ անազնիվ արարք:

6.2 Ազնվության և բարոյականության սկզբունքներին պետք է համապատասխանի ԳԿՄԿ բոլոր աշխատակիցների՝(ակադեմական կառավարման աշխատակազմից մինչև մասնագիտական ծառայություններ տրամադրող ավագ կառավարիչների) վարքագիծը:

6.3 Նշված սկզբունքները պարտադիր են նաև դասավանդողների՝ իրենց մասնագիտական գործառույթներն իրականացնելիս, ուսանողների՝ ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոնները հարգելու և պահպանելու, ինչպես նաև ԳԿՄԿ այլ աշխատակիցների համար:

6.4 **ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք** իրենց իրավասության շրջանակներում որոշումներ ընդունելիս և այլ աշխատակիցների (գործընկերների) հետ փոխհարաբերություններում ղեկավարվում են ազնվության սկզբունքով: Մասնավորապես՝ ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձ պաշտոններ զբաղեցնող անձանց և ակադեմիական աշխատակազմի այլ աշխատակիցների հետ փոխադարձ հարաբերությունները, պետք է հաստատված լինեն բացառապես միմյանց հարգելու, հավատալու և վստահության վրա: Բացառվում է վարքագծի այնպիսի դրսևորում, որը կարող է որակվել որպես խաբեություն, կեղծիք կամ խարդախություն:

6.5 **Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման** պաշտոններ զբաղեցնող անձինք նույնպես պարտավորվում են պահպանել ազնվության սկզբունքը փոխադարձ հարաբերություններում և այլ անձանց հետ: Բացառվում է վարքագծի այնպիսի դրսևորում, որը հետապնդում է շորթման, կոռուպցիոն կամ որևէ այլ անազնիվ նպատակ: Նշվածը վերաբերում է հատկապես ֆինանսական գործառույթներով օժտված աշխատակիցներին, որոնց համար անհրաժեշտ է առաջնորդվել «ազնիվ և թափանցիկ հաշվապահություն» սկզբունքով, որն արգելում է ցանկացած ֆինանսական խարդախություն կամ գողություն (օրինակ՝ հաշվապահական գործառույթներ, պայմանագրերի բաշխման և գնումներ կատարելու գործընթացներում):

6.6 **ԳԿՄԿ ուսանողները,** (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը) պարտավորվում են հարգել և հավատարիմ լինել ազնվության սկզբունքին՝ ուսումնառության ողջ ընթացքում:

6.7 Ուսանողները չպետք է

- դրսևորեն այնպիսի վարքագիծ, որի հետևանքով նրանք կստանան դրական կամ բարձր գնահատականներ, մասնավորապես՝ առաջարկել դրամական կամ նյութական կաշառք, կամ որևէ այլ ոչ իրավաչափ բնույթի առաջարկ,
- ձեռք բերեն ուսանողի որոշակի ակադեմիական աստիճանն ու որակավորումները հավաստող կեղծ փաստաթղթեր և ներկայացնեն դրանք համապատասխան մասնագիտական ամբիոններ, և որոնց ձեռք բերելու նպատակով նրանք չեն կատարել գիտական կամ հետազոտական աշխատանք:
- Մագիստրոսական կամ կուրսային աշխատանքների կատարման նպատակով արգելվում է գրագողությունը, գրավոր աշխատանքների պատվիրումը, դասախոսներին կաշարք առաջարկելը:

6.8 Ուսանողները պետք է՝

- լինեն ազնիվ, ճշմարտախոս, բարեխիղճ իրենց ուսումնառության ողջ ընթացքում, ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի և անձնակազմի այլ անդամների հետ փոխհարաբերություններում, զերծ մնան այնպիսի արարքներից, որոնք կարող են կասկածի տակ դնել ուսանողի պարկեշտությունը, ազնվությունը և բարոյականությունը:
- կարողանան կատարել ուսումնական պլանը և հանձնել քննություններն առավելագույնս բարեհաջող կերպով՝ չենթարկվելով որևէ արտաքին ազդեցության, մասնավորապես՝ պետք է հրաժարվեն դասախոսական անձնակազմի կողմից հեղինակած դասագրքերը գնելուն պարտադրելուց կամ մասնավոր վճարի դիմաց լրացուցիչ դասերին հաճախելուց:
- Գնահատման ներկայացնեն բացառապես իրենց կողմից կատարված կուրսային և մագիստրոսական աշխատանքները:

6.9 **ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական աշխատակազմը** ԳԿՄԿ ուսանողների դասավանդման ընթացքում պահպանում է ակադեմիական ազնվության սկզբունքից բխող բոլոր պահանջները: Դասախոսական աշխատակազմի համար ակադեմիական ազնվության սկզբունքը նշանակում է՝

- անաչառ կերպով գնահատել ուսանողներին, բացառելով հետևյալ դրսևորումները՝ անձնական համակրանք կամ հակակրանք, դրամական կամ այլ նյութական կաշառք, անձնական շահեր և այլն:
- Ուսանողների բոլոր աշխատանքները գնահատվում են օբյեկտիվ, թափանցիկ և անկողմնակալ՝ հաշվի է առնվում աշխատանքների կատարման առանձնահատկությունները և պահանջները՝ ձևը, բովանդակությունը, մասնագիտական որակները և ուսանողի մասնագիտական հմտությունները:
- Քննությունների արդյունքում պետք է բացառվեն խարդախության բոլոր դեպքերը*:*

6.10 Ազնվության սկզբունքը պետք է պահպանվի ակադեմիական աշխատակազմի կողմից նաև հետազոտական աշխատանքների կազմակերպման ընթացքում: Ակադեմիական աշխատակազմը պետք է ձեռնարկի համապատասխան կանխարգելող բնույթի միջոցներ, որպեսզի հետազոտության արդյունքների վերաբերյալ չտարածվի կեղծ տեղեկություններ (գրագողություն), ինչպես նաև հնարավոր լինի կանխել խարդախությունը, ստախոսությունն ու խաբեությունը:

7. ՃՇՄԱՐՏԱՑԻՈՒԹՅՈՒՆ

7.1 Ճշմարտացիությունը բխում է *ազնվության* հիմնարար սկզբունքից, ինչը ենթադրում է, որ ԳԿՄԿ ողջ ակադեմիական աշխատակազմը փոխադարձ հարաբերություններում պետք է դրսևորի ակադեմիական ազնվություն, (բոլորը պարտավոր են ասել միայն ճշմարտությունը և չստեն): Ճշմարտացիության սկզբունքը հարաբերակցվում է

«գիտելիքի ազատ և բաց տարածման» սկզբունքի հետ[4]:

7.2 ԳԿՄԿ ***ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք,*** ներառյալ ԳԿՄԿ դասախոսական անձնակազմը պարտավոր են՝

- իրենց գործունեությունն իրականացնել ազնվության սկզբունքի համաձայն:
- հետազոտական աշխատանքները կազմակերպել և ղեկավարել ակադեմիական բարեվարքության պահանջների համաձայն, որի համար ստանձնում են սոցիալական պատասխանատվություն[5]:
- կրում են հետազոտական աշխատանքը հրապարակայնացնելու պարտավորություն[6]:

8. *ԱՐԴԱՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ*

8.1 ***Արդարացիությունը*** հիմնարար սկզբունք է, որը պետք է պահպանվի ԳԿՄԿ ակադեմիական ողջ աշխատակազմի, դասախոսական կազմի և ուսանողների կողմից փոխադարձ հարաբերություններում: Արդարացիության սկզբունքը ենթադրում է անկողմնակալություն, ցանկացած խտրականության բացառում, հավասարություն:

8.2 ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք պարտավոր են՝ այլ աշխատակիցների հետ փոխհարաբերություններում լինել անկողմնակալ, հետևողական, կանխատեսելի և օբյեկտիվ: Մանսավորապես՝ աշխատակակցի աշխատանքային առաջխաղացման և աստիճանների նշանակման ցանկացած գործողության հետ կապված՝ ղեկավարվել արդարացիության սկզբունքով, որն արտահայտվում է տվյալ անձի նկատմամբ անկողմնակալ, կանխատեսելի, օբյեկտիվ վարքագծով և առանց որևէ խտրականության դրսևորման:

8.3 ԳԿՄԿ համակարգում մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք նույնպես առաջնորդվում

---

[4] Տես՝ (Համալսարանների միջազգային ասոցիացիա–Մագնա կարտա դիտարան, 2012 թ., պարբ. 2.1 և 2.2) և «գիտելիքի զարգացման» (ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004 թ., պարբ. 1.1):

[5] Տես՝ ՅՈՒՆԵՍԿՕ, 1997 թ., պարբ. 34 և 29, ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004 թ., պարբ. 4:

[6] Եվրոպական հանձնաժողով, 2005 թ., պարբ. 13:

են արդարացիության սկզբունքով, մասնավորապես՝ արդարացիություն աշխատողների համալրման հարցում իրենց պատասխանատվության ոլորտներում:

8.4 ԳԿՄԿ ուսանողները, (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը)

- պետք է ցուցաբերեն արդարացիություն համակուրսեցիների և բուհի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) հետ հարաբերություններում:
- դրսևորեն հավասար և արդար վերաբերմունք այն ուսանողների հանդեպ, որոնք ընդգրկված չեն ուսանողական խորհուրդներում և չունեն ներկայացուցչական լիազորություններ, և արդար լինեն իրենց վերաբերյալ որոշումներ կայացնելիս և իրենց անունից հանդես գալու:

9. Սոցիալական արդարություն

9.1 ***Սոցիալական արդարության սկզբունքը*** սերտորեն առնչվում է սոցիալական ժողովրդավարության կրթությանը և մասնակցային ժողովրդավարության/ակտիվ քաղաքացիության կրթությանը:

9.2 ***Սոցիալական արդարությունը*** արմատապես բացառում է խտրականության որևէ դրսևորում, որը կարող է հանգեցնել անհանդուրժողության և քսենոֆոբիայի դրսևորումներին: Այս մասին բազմիցս անդրադարձ է արվել միջազգային իրավական ակտերում, միջազգային կազմակերպությունների և միջազգային դատական ատյանների կողմից ընդունված որոշումներում[7]:

9.3 **ԳԿՄԿ *ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք***

- իրականացնում են բաց քննարկումներ, որոնք վերաբերում են ուսանողների ուսուցման և դասավանդման գործընթացներին;

[7] Տե՛ս Միջազգային կրթական կազմակերպություն, 2004 թ., պարբ.7e, ՀՄԱ-ՄԿԴ 2012թ., պարբ.2.2, ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004 թ., պարբ. 1.1, ՅՈՒՆԵՍԿՕ, 1997 թ., պարբ. 22 և 25, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 1950 թ., Մարդու իրավունքների կոնվենցիա, 14-րդ հոդված, խտրականության արգելք:

- ուսանողների վերաբերյալ որոշումներ կայացնելիս ցուցաբերում են աջակցություն՝ վերջիններիս այդ գործընթացներին ներգրավվելու ուղղությամբ:
- իրականացնում են մշտադիտարկումներ հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխան քաղաքականության մշակման վերաբերյալ, որոնց համար պատասխանատու է ԳԿՄԿ ողջ ակադեմիական համակարգը:
- պատասխանատվություն է կրում ԳԿՄԿ ակտիվների, ռեսուրսների, շրջակա միջավայրի ողջամիտ կառավարման մասով:

9.4 **ԳԿՄԿ ուսանողները** (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը)

- պետք է դրսևորեն անխտրական վերաբերմունք և հանդուրժողականություն համակուրսեցիների և ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) հետ փոխհարաբերություններում:
- այն ուսանողները, ովքեր հանդիսանում են ուսանողական խորհրդի ներկայացուցիչ, պետք է ապահովեն, որ իրենց՝ որպես ներկայացուցիչների կողմից դրսևորվող վարքագիծը լինի համահունչ ***հավասարության, արդարության և սոցիալական արդարության*** սկզբունքներին:

10. Որակյալ կրթություն

10.1 ***Որակյալ կրթությունը*** պետք է լինի ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի գործունեության նպատակը և հիմնական ուղղությունը: ԳԿՄԿ մագիստրատուրայի համակարգի յուրաքանչյուր աշխատակից իր աշխատանքում պետք է անվերապահ և հետևողականորեն պահպանի որակյալ կրթության սկզբունքի պահանջները, մասնավորապես՝

10.2 **ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք**

պարտավորվում են՝

- Ապահովել ուսանողներին որակյալ դասավանդմամբ և ուսումնառությամբ,
- նպաստել ուսանողներին դրսևորելու բարձր առաջադիմություն և ձեռք բերելու մասնագիտական հմտություններ և կարողություններ
- ապահովել ուսումնական և գիտահետազոտական հնարավորինս բարձր արդյունքներ
- քննարկել և հաստատել որակյալ կրթություն ապահովելու արդյունավետ ընթացակարգեր և քաղաքականություն
- ստեղծել այդ քաղաքականության և ընթացակարգերի իրականացման գործուն և արդյունավետ կիրառման մեխանիզմներ (ներառյալ դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը):

10.3 ԳԿՄԿ համակարգում մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք համաձայն որակյալ կրթության սկզբունքի պահանջներին պարտավորվում են՝

- մշակել որակյալ կրթություն ապահովելու արդյունավետ ընթացակարգեր և քաղաքականության ծրագրեր և ներկայացնել դրանք ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձանց քննարկմանը և հաստատմանը:
- ԳԿՄԿ անձնակազմին աջակցություն ցուցաբերեն և հետևեն որակյալ կրթության ապահովման քաղաքականության և ընթացակարգերի իրականացմանը, այդ թվում ձեռնարկել միջոցներ դրանց իրականացման համար անհրաժեշտ պատշաճ ռեսուրսներ տրամադրելու:

10.4. ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական աշխատակազմը որակյալ սկզբունքի պահանջներին համաձայն պարտավոր է՝

- Մշակել և համապատասխան ամբիոն ներկայացնել որակյալ և արդյունավետ ՄԿԾ,
- Տիրապետել արդյունավետ և որակյալ դասավանդման մեթոդներին, նաև ինտերակտիվ մեթոդներին,

- Պարբերաբար կատարելագործել մասնագիտական կարողությունները և հմտությունները, մասնակցել վերապատրաստման դասընթացների, թրեյնինգների, տպագրել հոդվածներ, մենագրություններ և այլ աշխատություններ,
- Ուսումնառության ողջ ժամանակահատվածում, հատկապես՝ քննական շրջանում քննություններն ու աշխատանքները գնահատելիս դրսևորել առավելագույն օբյեկտիվություն, բարեխղճություն և արդարություն:
- Գիտական աշխատանքներ ղեկավարելիս ուսանողի հետ փոխհարաբերություններում դրսևորել առավել բարեխղճություն, աշխատանքի հետ կապված ցանկացած հարցով տրամադրել ուսանողին աջակցություն և խորհրդատվություն:

10.5 ԳԿՄԿ ուսանողները, (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը) պարտավորվում են

- իրենց ակադեմիական աշխատանքը (մասնագիտական առարկաները և մագիստրոսական աշխատանքը) կատարել լավագույն որակով, պատշաճ և բարեխիղճ
- Կարողանան բարելավել ԳԿՄԿ մագիստրատուրայի ընդհանուր որակը, որակի գնահատման և բարձրացման գործընթացներում իրենց ներգրավման և մասնակցության միջոցով:

11. *Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում*

11.1 Սկզբունքի հիմքում ընկած է ԳԿՄԿ մագիստրատուրայի կրթության համակարգի շարունակական բարելավման գործում ակադեմիական աշխատակազմի բոլոր աշխատակիցների առավելագույն ներդրումը: Ընդհանուր առմամբ, *անձնական կատարելագործման և համակարգային բարելավման սկզբունքը* դրսևորվում է որպես մասնագիտական պարտավորություն, որն արտահայտվում է ա) անձի՝ իր մասնագիտական առումով կատարելագործվելու ձգտմամբ, բ) նպաստելու կրթական համակարգի ընդհանուր զարգացմանը: Բացի այդ, ***անձնական կատարելագործման և***

համակարգային բարելավման **սկզբունքը** կիրառելի է և վերաբերում է ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի և այլ դերակատարների համար**:**

11.2 ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք պարտավորվում են՝

- ձեռնարկել համապատասխան միջոցներ իրենց մասնագիտական կատարելագործման նպատակով, մասնավորապես՝ դասավանդման փորձառության զարգացման նպատակով կիրառել նաև գիտական և հետազոտական գործունեության մեջ իրենց ունեցած ներդրումները:
- հաստատել համապատասխան կապ ԳԿՄԿ կրթական համակարգի, ՀՀ այլ բուհերի և իրենց մասնագիտական զարգացման միջև, որպեսզի հնարավոր լինի ներդնել և հետագայում զարգացնել նաև ԳԿՄԿ կրթական ոլորտում միջազգային գիտահետազոտական ոլորտի ընթացիկ զարգացումները:
- ձեռնարկել միջոցներ և ներդնել մեխանիզմներ արդյունավետ ղեկավարման և կառավարման հմտությունների անձնական կատարելագործման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, իրենց անձնական կատարելագործումը պետք է դրական ազդեցություն ունենա ինստիտուցիոնալ, ազգային կամ միջազգային մակարդակներում՝ բարձրագույն կրթական ոլորտի բարելավման վրա: Այս ամբողջը ենթադրում է նորամուծությունների ներմուծում և փոփոխություններին հարմարվելու կարողություն:

11.3 ԳԿՄԿ համակարգում մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք՝

- մասնագիտական պարտավորություն են ստանձնում ***կատարելագործելու*** իրենց անձնական ղեկավարման և կառավարման հմտությունները: Իրենց գործունեության մակարդակին համապատասխան այս ղեկավարները պետք է ձգտեն, որպեսզի իրենց ***անձնական կատարելագործումը*** առավելագույն դրական ազդեցություն ունենա բուհի ***համակարգային կատարելագործման*** վրա:

Սա պետք է ներառի նորամուծությունների ներմուծումը և փոփոխություններին հարմարվելու ճկունությունը:

11.4 ԳԿՄԿ ուսանողները, (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը) պարտավորվում են՝

- նպաստել ԳԿՄԿ մագիստրատուրայի ընդհանուր համակարգի բարելավմանը, կատարելագործմանը և կրթության որակի բարձրացմանը:
- ԳԿՄԿ գիտական, գիտահետազոտական աշխատանքի միջոցով կարողանալ դրսևորվել և ինքնակատարելագործվել:
- օժանդակել ԳԿՄԿ կատարելագործմանը ինստիտուցիոնալ, ազգային և միջազգային մակարդակներում:

12. Ինստիտուցիոնալ ինքնավարություն

12.1 ***Ինստիտուցիոնալ ինքնավարության*** սկզբունքը, որպես ԳԿՄԿ Կենտրոնի ինքնավարությունն ու անկախությունը պահպանելու անհրաժեշտություն, սերտորեն առնչվում է ակադեմիական ազատության սկզբունքին[8], որի նպատակն է հասնել առավելագույն ինքնուրույն կրթական գործունեության կազմակերպման և կառավարման, առանց կենտրոնացած քաղաքական հսկողության համակարգի և կողմնակի ազդեցության:

12.2 ***Ինստիտուցիոնալ ինքնավարության*** սկզբունքի պահանջների ապահովման նպատակով ինստիտուցիոնալ ինքնավարության հիմնական պատասխանատվությունը կրում են ԳԿՄԿ ակադեմիական բարձրաստիճան և կառավարման պաշտոններ զբաղեցնող անձինք: ԳԿՄԿ ամբողջ աշխատակազմը իր իրավասությունների և գործառույթների շրջանակներում նույնպես պետք է ներգրավված լինի ***ինստիտուցիոնալ ինքնավարությանը*** հասնելու համապատասխան աշխատանքների մեջ:

12.3 ԳԿՄԿ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք պարտավորվում են՝

[8] Տես՝ ՀՄԱ-ՄԿԴ, 2012 թ., պարբ. 2.1, 2.2; ՅՈՒՆԵՍԿՕ, 1997 թ., պարբ. 17-20, և ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004թ., պարբ. 1.1-1.2:

➢ Նպաստել ինստիտուցիոնալ ինքնավարությանն ու անկախությանը և այդ նպատակով ներդնել համապատասխան մեխանիզմներ:

➢ Համապատասխան ինստիտուցիոնալ ինքնավարություն ձեռք բերելու դեպքում ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմը պետք է ապահովի և երաշխավորի իր հաստատությունների կողմից (ամբիոններ, դեկանատ, ուսումնա-մեթոդական մաս և այլն) պարտավորությունների գիտակցումը հասարակության ավելի լայն շրջանակների նկատմամբ:

➢ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող ակադեմիական աշխատակազմը պետք է կարողանա արժևորել այս ***ինքնավարությունը*** ղեկավարման ու կառավարման իր անկախ գործառույթները լիարժեք ու գիտակցված կատարելու և այս խնդրի առնչությամբ անտեղի միջամտություններին դիմակայելու միջոցով:

12.4 ԳԿՄԿ ուսանողները, (այդ թվում՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերակցությունը) պարտավորվում են՝

➢ մասնակցել և աջակցել ԳԿՄԿ-ում ***ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատմանը***:

➢ պարտավորություն կրել ԳԿՄԿ ***ինստիտուցիոնալ ինքնավարությունը*** ներկայացնել հանրային քննարկման:

13. Շահերի բախումներ

13.1 Ակադեմիական համակարգում աշխատակցի մասնավոր շահերի և պարտականությունների բախումների արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որը հանգեցնում է ԳԿՄԿ-ում անբարենպաստ հետևանքների, մասնավորապես՝ այլ աշխատակիցների գործառույթների և պարտականությունների վրա բացասական ազդեցություն է ունենում աշխատակցի կողմից որևէ գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը, որն ակնհայտ վկայում է անձի՝ իր իսկ անձնական շահը գերադասելու և ուղղորդվելու միտում:

13.2 Շահերի բախումնային իրավիճակ առաջանալու դեպքում ԳԿՄԿ համակարգի աշխատակիցը պարտավոր է գրավոր հայտարարություն ներկայացնել էթիկայի

հանձնաժողովին՝ որը եզրակացություն է տրամադրում անձի կողմից առաջացած շահերի բախման իրավիճակի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 3.

3.1 ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմի, դասախոսական անձնակազմի և ուսանողների վարքագծի ընդհանուր կանոնները

3.1.1 **ԳԿՄԿ տնօրենի** իրավունքները, գործառույթները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ԳԿՄԿ Կանոնադրությամբ, ներքին կանոնակարգերով և սույն Կանոնագրքով:

3.1.2 **ԳԿՄԿ տնօրենից բացի ԳԿՄ Կենտրոնի** մյուս ղեկավարների իրավուքները և գործառույթները սահմանվում են օրենքներով, ԳԿՄԿ Կանոնադրությամբ, Աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և սույն Կանոնագրքով:

3.1.3 **ԳԿՄԿ ղեկավարները իրավունք ունեն սույն էթիկայի Կանոնագրքի** սկզբունքների ցանկացած խախտման մասին հայտնելու համապատասխան մարմին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջացնելու մտավախության:

3.2 ԳԿՄԿ ղեկավարների պարտականությունները

3.2.1 Իրենց իրավասության շրջանակներում գործառույթներ իրականացնելիս վեր դասել ԳԿՄԿ շահերն իրենց սեփական շահից, չհետապնդել շահույթ ստանալու նպատակ, թույլ չտալ դիրքի և զբաղեցրած պաշտոնի չարաշահում՝ գործելով հակառակ օրենսդրությանը և աշխատանքային օրենսգրքի:

3.2.2 Չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործեու հրահանգ կամ ցուցում ֆիզիկական անձից, (բացառությամբ վերադասի) կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից, կրոնական կամ որևէ այլ մարմնից:

3.2.3 Չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ նյութական, ֆինանսական միջոցներ, չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց վրա իրենց աշխատանքի ընթացքում:

3.2.4 Կաշառքի կամ անձնական օգուտ ստանալու առաջարկության յուրաքանչյուր փորձի մասին անմիջապես հայտնել ԳԿՄ Կենտրոնի տնօրենին (իսկ տնօրենի դեպքում՝ կառավարման մարմնի ղեկավարին):

3.2.5 ԳԿՄԿ տնօրինության տակ գտնվող ռեսուրսներն օգտագործել ըստ նպատակային նշանակության, չվատնել դրանք, ճիշտ մշակել, կառավարել և տնօրինել ԳԿՄ Կենտրոնի աշխատակիցների անձնական կամ առևտրային տեղեկությունները՝ համաձայն ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի:

3.2.6 Սույն Կանոնագրքով սահմանված էթիկայի կանոնները և սկզբունքները խախտելու դեպքում ԳԿՄԿ տնօրինության ղեկավար և կառավարման բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք իրավունք ունեն դիմելու համապատասխան մարմիններին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

3.3 ԳԿՄԿ աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների վարքագծի ընդհանուր կանոնները

3.3.1. ԳԿՄԿ աշխատակազմը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները պարտավոր են՝

- Բարեխղճորեն հետևել, կատարել և չխախտել ԳԿՄԿ Կանոնադրության դրույթները, ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոնները, սույն Կանոնագրքի դրույթները, ինչպես նաև ԳԿՄԿ տնօրինության կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները:
- Չուշանալ և ներկայանալ աշխատանքի ժամանակին և պահպանել ԳԿՄԿ-ում սահմանված անցագրային կանոնները:
- Աշխատանքի ներկայանալ գործնական ոճին համապատասխան, կրել պատշաճ հագուստ:
- Դրսևորել պատշաճ վարքագիծ, ցուցաբերել բարեկիրթ վերաբերմունք և ուշադրություն աշխատակիցների հետ փոխհարաբերություններում:
- Աշխատանքի ընթացքում ուսանողների և աշխատակազմի հետ փոխադարձ հարաբերություններում դրսևորել խոսքի մշակույթ և բարեկիրթ շփման ոճ:
- Հարգանքով դիմել միմյանց՝ անկախ տարիքից և զբաղեցրած պաշտոնի:
- Դասախոսները ուսանողների հետ հարաբերություններում պետք է դրսևորեն հարգանք, զսպվածություն և հանդուրժողություն:
- Հարգել այլոց իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել հանդուրժողականություն սահմանադրական սկզբունքներին և արժեքներին չհակասող այլ անձանց քաղաքական և կրոնական հայացքների հարցերում:
- Դրսևորել հարգալից վերաբերմունք տարբեր ազգերի և ազգությունների աշխատողների և ուսանողների սովորույթների և ավանդույթների նկատմամբ, հաշվի առնելով էթնիկ և ազգային առանձնահատկությունները:
- Խնամքով վերաբերվել գույքին, չախտոտել տարածքը, պահպանել մաքրությունը լսարաններում:

3.3.2 ԳԿՄԿ-ում տարածքում և ուսումնառության ողջ ժամանակահատվածում դասախոսները, ԳԿՄԿ աշխատակիցները և ուսանողները չպետք է իրականացնեն քաղաքական կամ գաղափարախոսական քարոզչություն:

4. Դասախոսի մասնագիտական էթիկան

4.1 ԳԿՄԿ դասախոսը պարտավոր է.

- ուսանողների հետ հարաբերությունները հաստատել փոխադարձ հարգանքի և վստահության վրա, դրսևորել բարյացակամ վերաբերմունք, պահանջել ուսանողներից ենթարկվել ԳԿՄԿ-ում հաստատված կարգապահությանը դասապրոցեսի ողջ ընթացքում:
- Պահպանել օբյեկտիվություն և ճշմարտացիություն յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ:
- Չպարտադրել ուսանողներին իր հայացքները և չթելադրել իր կամքը:
- Ձևավորել ուսանողների մոտ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, պատասխանատվությունը, քննադատական մտածելակերպը, ինքնատիրապետումը, հայրենասիրությունը, բարեխղճությունը, ազնվությունը, արհետսավարժությունը, հարգալից վերաբերմունքը այլ անձանց իրավունքների և ազատությունների նկատմամբ:

4.2 Ուսումնառության ողջ ընթացքում դասախոսն իրավունք չունի ուսանողի նկատմամբ գործադրել ազդեցության այնպիսի միջոցներ, որոնք կարող են հակասել հասարակությունում ընդունված համընդհանուր բորայահոգեբանական նորմերին և բացասական ազդեցություն ունենալ ուսանողների անձնական շահերին:

4.3 Անընդունելի է դասախոսի կողմից ուսանողների հետ այլ ուսանողների և դասախոսների անձնական և մասնագիտական հատկանիշների, գործողությունների, վարքագծի քննարկումները և քննադատությունները:

4.4 Անթույլատրելի է դասախոսի կողմից ուսանողների հասցեին հնչող վիրավորանքները, կշտամբանքը կամ այնպիսի արտահայտություններ թույլ տալը, որոնք կարող են ընկալվել որպես դրամական պարգևի կամ այլ նվերի դիմաց դրական գնահատականի խոստում կամ որևէ այլ արտոնություն:

5. **Ուսանողի վարքագծի կանոնները**

5.1 Ուսանողը պարտավոր է ուսումնառության ողջ ընթացքում ձգտել ձեռք բերել բարձր գիտելիքներ և մասնագիտանալ ընտրված մասնագիտության մեջ:

5.2 Ուսանողը պարտավոր է հետևել ԳԿՄԿ Կանոնադրությանը, ԳԿՄԿ այլ կարգերի և

կանոնակարգերի դրույթներին:

5.3 Ուսանողը պետք է բարեխիղճ վարքագիծ դրսևորի ԳԿՄԿ-ում ակադեմիական աշխատակազմի և այլ ուսանողների հետ հարաբերություններում:

5.4 Ուսանողը պետք է ձեռնպահ մնա այնպիսի արտահայտություններից և գործողություններից, որոնք որևէ կերպ կնսեմացնեն կամ կարատավորեն ԳԿՄԿ ուսանողների պատիվն ու արժանապատվությունը:

5.5 Դասապրոցեսի ընթացքում ուսանողը կարող է օգտվել էլեկտրոնային սարքերից միայն այն չափով, որքանով դրանք անհրաժեշտ են և կապված են տվյալ դասընթացին:

5.6 Ուսանողի այլոց հետ փոխհարաբերություններում հիմնական սկզբունքներն են՝ փոխադարձ հարգանքը, վստահությունը, ազնվությունն ու արդարացիությունը: Անթույլատրելի են ուսանողի կողմից հնչեցված անվայել, անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող արտահայտությունները, նրանց բարոյական կամ նյութական վնաս հասցնելը, հակաօրինական արարքների կատարումը:

5.7 Ուսանողը պարտավորվում է հարգել և պահպանել ԳԿՄԿ կարգապահությունը և ԳԿՄԿ-ում ձևավորված ավանդույթները:

6. ԳԿՄԿ դասախոսական կազմի և ԳԿՄԿ ուսանողների փոխհարաբերությունը

6.1 Ուսանողները պետք է հաճախեն դասերին սահմանված ժամին: Ուշացած ուսանողները թույլատրվում են դասին միայն դասախոսի թույտվությամբ:

6.2 Ուսանողները հոտնկայս ողջունում են դասախոսին:

6.3 Ուսանողի և դասախոսի հետ հարաբերություններում ուսանողները պետք է առաջնորդվեն հետևյալ կանոններով.

- Անհրաժեշտ է դիմել դասախոսին պատշաճ կերպով՝ ըստ նրա ազգանվան կամ անուն հայրանունի:
- Ուշադիր կարդալ և ծանոթանալ ԳԿՄԿ կայքում տեղադրված կամ ցուցատախտակներին փակցված տեղեկատվությանը, նախքան ամբիոն մուտք գործելը

և հարցեր ուղղելը:

- Գիտակցել, որ դասախոսը պետք է ուսանողի հարցերին պատասխանի հետևյալ դեպքերում. ա) դասապրոցեսին, բ) ըստ սահմանված դասացուցակի՝ խորհրդատվությունների ժամանակ, գ) ստուգարքներին և քննություններին, դ) անհատական պայմանավորվածության դեպքերում, ե) ուսանողական տարբեր միջոցառումների, ուսանողական գիտական կոնֆերանսների, ուսանողական ակումբների նիստերի անցկացման ժամանակ:

6.4 Ուսանողներն իրավունք ունեն հարցեր ուղղել դասախոսին՝ դասընթացի թեմայի շրջանակներում, վերջինս էլ պարտավոր է սպառիչ և բավարար պատասխանել հարցերին, ինչպես նաև պարզաբանել հարցի բուն էությունը՝ առանց այլևայլությունների և կողմնակի մեկնաբանությունների:

6.5 Դասախոսը ուսանողի խնդրանքով պարտավոր է հիմնավորել իրեն նշանակած գնահատականը:

6.6 Դասախոսի և ուսանողի միջև անձնական հակասությունների և կոնֆլիկտ ունենալու դեպքում ուսանողը կարող է դիմել մասնագիտական ամբիոն՝ քննությունը կամ լուծարքը այլ դասախոսի մոտ հանձնելու թույլտվություն ստանալու համար: Դասախոսի փոխարինման մասին հարցը որոշվում է ԳԿՄԿ ուսումնական մասի պետի կողմից՝ ամբիոնի վարիչի ներկայացման հիման վրա:

7. ԳԿՄԿ աշխատակցի մասնագիտական էթիկան

7.1 ԳԿՄԿ աշխատակցի վարքագծի գործընկերների հետ հարաբերություններում հիմնական սկզբունքը՝ փոխադարձ հարգանքն է, որը բխում է ազնվության և արդարության սկզբունքներից:

7.2 ԳԿՄԿ աշխատակիցն իր վարքագծով աջակցում է ԳԿՄԿ հեղինակության բարձրացմանը և պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս հասցնել ԳԿՄԿ վարկին և բարի համբավին:

7.3 ԳԿՄԿ աշխատակիցը պարտավոր է.

- աշխատանքային հարաբերություններում պահպանել ենթակարգությունը
- կարողանալ դրսևորել ինքնատիրապետում, կառավարել իր զգացումներն ու զգացմունքները, գործընկերների հետ հարաբերություններում թույլ չտալ անձնական համակրանքի կամ հակակրանքի որևէ արտահայտում:
- լինել կարգապահ, ճշտապահ, զուսպ և օրինակելի,
- ԳԿՄԿ հեղինակությունը պահպանելու հարցում լինել սթափ և ուշադիր, որը ենթադրում է աշխատակցի կամ այլ անձանց կողմից սխալների և բացթողումների բացահայտում և վերացում, որոնք կարող են հնարավոր վնասներ և շփոթմունք առաջացնել,
- չպետք է անտարբեր լինի այլ աշխատակիցների անգործության և սխալների նկատմամբ: Այսպիսի իրավիճակների առկայության դեպքում դրանք պետք է քննարկել տվյալ աշխատակցի հետ, իսկ արդյունքի չհասնելու դեպքում դրա մասին տեղյակ պահել համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:
- հարգել և հայցել գործընկերների մասնագիտական կարծիքը՝ վերջիններիս իրավասության շրջանակներում և գնահատել նրանց ներդրումը ԳԿՄԿ համակարգում:
- գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, չխոչընդոտել այլ անձանց կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարմանը, խնայել իր և գործընկերոջ ժամանակը:
- գործընկերոջ վերաբերյալ քննադատությունն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը,
- երրորդ անձանց հետ չքննարկել գործընկերոջ վարքագիծը, գործնական, մասնագիտական, անձնական հատկանիշները,
- աշխատավայրում պահպանել առողջության և ապահովության համապատասխան պահանջները՝ փորձելով վերացնել կամ անմիջական ղեկավարին տեղեկացնել իր առողջությանը կամ ապահովությանը սպառնացող ցանկացած վտանգի մասին,
- չօգտագործել ծառայողական պարտականությունների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար,

- աշխատանքը, ինչպես նաև հանգստի ու սնվելու ընդմիջումը սկսել և ավարտել ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոններով սահմանված ժամերին,
- աշխատանքի ներկայանալ կոկիկ, գրասենյակային ոճի հագուստով՝ ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոններով սահմանված ձևով,

7.4 Գործարար հեռախոսային զանգերին պատասխանելիս աշխատակիցը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

- Այլ կազմակերպություններից և հաստատություններից ստացվող զանգերին պատասխանել արագ, բարյացակամ, ըստ անհրաժեշտության ներկայանալ անուն, ազգանունով և զբաղեցրած պաշտոնով:
- Այլ կազմակերպություններ և հաստատություններ հեռաձայնելիս ներկայանալ պատշաճ, նշելով անուն, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը:
- Խոսակցությունն ավարտելը, որպես կանոն, պետք է կատարի հեռաձայնողը:
- Եթե հարցը, որի առնչությամբ աշխատակցին անհրաժեշտ է կապվել գործընկերների կամ արտաքին ներկայացուցիչների հետ, հրատապ չէ, ապա նախապատվությունը պետք է տալ էլեկտրոնային փոստի միջոցով կապին:

7.5 ԳԿՄԿ աշխատակիցը պետք է զերծ մնա գործընկերների աշխատանքային, մասնագիտական որակների, վարքագծի և անձնական կյանքի մասին բացասական կարծիքներ արտահայտելուց և քննադատելուց:

7.6 ԳԿՄԿ աշխատակիցը ԳԿՄԿ ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական և գիտական աշխատանքների կազմակերպման և որակի բարելավման վերաբերյալ կարող է հրապարակավ արտահայտել իր կարծիքը և համապատասխան առաջարկություններով ներկայանալ ԳԿՄԿ տնօրինությանը կամ ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին:

7.7 ԳԿՄԿ աշխատակիցն աշխատանքային գործընթացում անախորժությունների և կոնֆլիկտային իրավիճակների առկայության պայմաններում, որոնք կարող են հավասարաչափ վնաս հասցնել ինչպես աշխատակցի, այնպես էլ ԳԿՄԿ հեղինակությանն ու վարկին, դրանց կանխարգելման նպատակով պարտավոր է.

- Անհապաղ տեղյակ պահել կոնֆլիկտի առկայության մասին անմիջական ղեկավարին:
- Անմիջապես դադարեցնել անախորժ իրավիճակն ավելի վատթարացնող և խորացնող գործողությունները կամ հարաբերությունները:
- Դրսևորել պատշաճ վարքագիծ, գործել ԳԿՄԿ Կանոնադրությամբ և այլ կանոնակարգերով իրեն վերապահված աշխատանքային կանոնների, սկզբունքների և մասնագիտական էթիկայի նորմերի ճշգրիտ և հստակ պահպանմամբ,
- Ձեռնարկել միջոցներ, որոնք կնպաստեն կոնֆլիկտային իրադրության բացասական հետևանքների վերացմանը:

7.8 ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ պատասխանատուն պարտավոր են ձեռնարկել միջոցներ՝ ուղղված կոնֆլիկտի շուտափույթ լուծմանը:

7.9 ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու է բացառապես իր գործառույթների իրականացման համար և չի կարող իր պարտականությունները փոխանցել գործընկերներին:

7.10 Պահպանել բարոյական սկզբունքներով սահմանված էթիկայի այլ նորմերը:

8. Էթիկայի կանոնների փոխհարաբերակցությունն այլ կառույցների և կազմակերպությունների, գործատուների և ՁԼՄ-ների հետ

8.1 Արտաքին կառույցների, կազմակերպությունների հետ հարաբերություններում ԳԿՄԿ ղեկավարները, ստորաբաժանումների ղեկավարները և պատասխանատուները պետք է առաջնորդվեն հետևյալ պահանջներով.

- Գործարար էթիկայի բարձր չափանիշներով;
- Տրամադրվող տեղեկատվության աղբյուրի հավաստիության սկզբունքով;
- Վեճերը և տարաձայնությունները փոխզիջումների և բանակցությունների միջոցով լուծելու առաջնայնության սկզբունքով;

8.2 ՁԼՄ-ների հետ հարաբերություններում ԳԿՄԿ աշխատակիցները, դասախոսները և ուսանողները պետք է՝

- Տեղեկատվություն տրամադրեն ելնելով բացառապես ԳԿՄԿ շահերից,
- ներկայացնեն ԳԿՄԿ շահերը և պահանջները, իրենց հարցազրույցներում ձեռնպահ մնալ ԳԿՄԿ հեղինակազրկող որևէ արտահայտությունից:
- Թույլ չտալ այնպիսի տեղեկատվության տարածմանը, որը չի կարող օգտագործվել ըստ նշանակության;
- Թույլ չտալ ԳԿՄԿ գործունեությանն առնչվող կամ ԳԿՄԿ աշխատակցի վերաբերյալ չստուգված՝ ոչ հավաստի տեղեկատվության տարածումը:

9. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

9.1 ԳԿՄԿ էթիկայի նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ԳԿՄԿ **Էթիկայի գծով կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ էթիկայի հանձնաժողով)**: Էթիկայի հանձնաժողովը կազմված է վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական ներկայացուցիչների կազմից:

9.2 Էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատվում է ԳԿՄԿ գիտական խորհուրդը՝ տնօրենի ներկայացմամբ:

9.3 ԳԿՄԿ էթիկայի հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում են՝ էթիկայի կանոնների խախտումների վեր հանումը, դիմումների քննությունը, քննարկվող հարցերի վերաբերյալ եզրակացություններ կամ պարզաբանումներ տրամադրելը:

9.4 ԳԿՄԿ էթիկայի հանձնաժողովը վարքագծի նորմերի խախտման կամ բացակայության մասին կայացնում է եզրակացություն:

10 Էթիկայի հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

10.1 Էթիկայի հանձնաժողովը աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ էթիկայի կանոնների խատման մասին բողոքներ ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

10.2 Էթիկայի հանձնաժողովի նիստերը ղեկավարում և վարում է էթիկայի

հանձնաժողովի նախագահը՝ ներկայացնելով օրակարգով սահմանված քննարկման ենթակա հարցերը:

10.3 Էթիկայի հանձնաժողովը հարցերը քննարկում է 15-օրյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան մեկ շաբաթ:

10.4 Էթիկայի հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է հրավիրել շահագրգիռ կամ երրորդ անձանց, մասնագետների և այլոց:

10.5 Էթիկայի հանձնաժողովը եզրակացություն է տալիս վարքագծի կանոնները խախտելու կամ խախտման բացակայության դեպքում՝ (դրական կամ բացասական եզրակացություն), այնուհետև՝ համապատասխան առաջարկություն է ներայացնում ԳԿՄԿ տնօրենին:

11. Էթիկայի նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգապահական տույժեր

11.1 Սույն կանոնագրքում ներառված կարգապահական պատասխանատվության հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգրքի (հոդ.223) և ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոնակարգի դրույթները:

11.2 Սույն Կանոնագրքի դրույթները չպահպանելը հանգեցնում է կարգապահական տույժերի, որոնք պետք է հիմնվեն արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պետք է համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

11.3 Ելնելով վարքագծի կանոնների խախտման աստիճանից՝ ԳԿՄԿ համակարգի աշխատակցի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

- *նկատողություն,*
- *խիստ նկատողություն,*
- *աշխատանքից ազատում*,
- *ԳԿՄԿ-ից հեռացում (վերաբերում է միայն ԳԿՄԿ ուսանողին*):

12. Կարգապահական տույժեր կիրառելը

12.1 Կարգապահական տույժ կիրառելիս հաշվի է առնվում էթիկայի նորմերի խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ նորմերի խախտման կատարման հանգամանքները և այդ նորմերը խախտողի նախկինում կատարած աշխատանքը:

12.2 **ԳԿՄԿ տնօրինության** մասով էթիկական նորմերի, կանոնների խախտման մասին բողոքները ներկայացվում են գրավոր՝ հետևյալ պահանջների պահպանմամբ.

- Բողոքում պետք է նշված լինեն խախտման փաստը հավաստող ողջամիտ

հիմքեր:

- Բողոքում պետք է նշվեն հիմնավորումներ, որոնք վկայում են, որ ենթադրյալ խախտում համարվող փաստերը հանդիսանում են ակադեմիական աշխատակազմի էթիկական վարվեցողության կանոնների խախտումներ:

12.3 ԳԿՄԿ աշխատակցին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից ընդունվում է կարգապահական տույժ կիրառելու մասին որոշում, որը ներկայացվում է ԳԿՄԿ տնօրենին:

12.4 ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմն իրավունք ունի բողոքարկել կարգապահական տույժ կիրառելու հարցով կարգապահական հանձնաժողովի որոշումը:

12.5 Բողոքը ներկայացվում է ԳԿՄԿ անունից որոշում կայացրած մարմնի վերադասին, որոշումը ստանալուց հետո մեկ ամսվա ժամկետում:

12.6 Բողոքը ներկայացվում է գրավոր, որում նշվում են բողոքարկման հիմքերը:

12.7 Կրկնակի բողոքարկման հնարավորությունը բացառվում է:

13. Եզրափակիչ դրույթներ

13.1 Սույն կանոնագիրքը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

13.2 Սույն կանոնագրքի ուժի մեջ մտնելու պահից ԳԿՄԿ աշխատակիցները տեղեկանում են կանոնագրքի դրույթների և դրանք խախտելու դեպքում պատասխանատվության մասին:

13.3 Էթիկայի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշման հիման վրա: